ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՏԱՇՊԲ 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան «27» հոկտեմբեր 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին), ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հրաձգության հանրապետական մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս Կազմակերպության տնօրեն Ա. Հայրապետյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով նաև Կողմեր, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1738-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է որոշման 09.05.01. 1148. «Արտադպրոցական դաստիարակություն ծրագիր» բյուջետային ծրագրի 32004. «Մարզադպրոցների գույքային և տեխնիկական ապահովվածության բարելավում» և 32005. «Արտադպրոցական դաստիարակություն իրականացնող կազմակերպությունների շենքային պայմանների բարելավում» միջոցառումներով (այսուհետ՝ ծրագիր) նախատեսված կառույցների տեխնիկական կարողությունների, աշխատանքային միջավայրի, գույքային և տեխնիկական ապահովվածության բարելավման արդյունքում կիրառական գիտելիքների ձեռքբերման արդյունավետության բարձրացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել մինչև 20847600 (քսան միլիոն ութ հարյուր քառասունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգել Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.2. ուսումնասիրել և ընդունել ներկայացվող ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվությունները՝ Պետական մարմնի պատասխանատու ստորաբաժանման դրական մասնագիտական եզրակացության հիման վրա, կամ հետ վերադարձնել՝ բացասական եզրակացությամբ, ընդ որում բացասական եզրակացությունը կարող է հիմք հանդիսանալ սահմանված կարգով Կազմակերպության ֆինանսավորման նվազեցման համար, ինչպես նաև

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունն երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները,

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.4. պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջել իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.1.1. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել ծրագրի իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան օգտագործումը.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը, 2022 թվականի յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 5-օրյա և ծրագրի ավարտից հետո 10-օրյա ժամկետում ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կատարողական հաշվետվություններ (բովանդակային և ֆինանսական),

2.4.5. պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Պետական մարմնի կողմից միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում՝ անվճար, պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.8. պայմանագրի շրջանակներում չօգտագործված գումարները, ինչպես նաև գնումների արդյունքում տնտեսված գումարները մինչև 2022 թվականի հունիսի 1-ը ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Պայմանագիրը կնքելուց հետո 5 օրյա ժամկետում Պետական մարմինը պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարն ամբողջությամբ փոխանցում է Կազմակերպության հաշվին:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել՝ չիրականացված միջոցառման գումարի չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով, իսկ 2.4.4.-ի դեպքում՝ 0.05 տոկոսի չափով տույժ յուրաքանչյուր կետանց օրվա համար: Ընդ որում, տուգանքի կամ տույժի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից կամ Կազմակերպությունը հետ է վերադարձնում պետական բյուջե:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Միջոցառման հանձնումը և ընդունումը

7.1. Ծրագրի ավարտից հետո, սույն պայմանագրի 2.1.2 ենթակետով տրված դրական եզրակացության հիման վրա սահմանված կարգով կազմվում և կողմերի միջև ստորագրվում է հանձնման-ընդունման ակտ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտի ձևին համաձայնեցված:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման, ինչպես նաև պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	**«Հրաձգության հանրապետական մարզադպրոց» ՊՈԱԿ**
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	ք. Երևան, Բագրատունյաց 48
Կառավարական տուն 2	
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011038180	Հ/Հ 900018002940
Հ/Հ 900011038560	ՀՎՀՀ 02205225
ՀՎՀՀ 02698732	
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Տնօրեն՝
_____ Վ. Գասպարյան	_____ Ա. Հայրապետյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված
«27» հոկտեմբեր 2021 թ. կնքված
N ԳՏԱՇՊԲ 1 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Իրականացվելիք միջոցառման					
Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)
004. «Մարզադպրոցների ույքային և տեխնիկական ապահովվածության բարելավում»	Գույքային և տեխնիկական ապահովվածության բարելավման արդյունքում կիրառական գիտելիքների ձեռքբերման արդյունավետության բարձրացում	Գույքային և տեխնիկական ապահովվածության բարելավման արդյունքում ուսումնամարզական գործընթացի ապահովում	Գույքային և տեխնիկական ապահովվածության բարելավման արդյունքում մարզման պայմանների արդյունավետության բարձրացում	01.06.2022 թ.	10 371 500
005. «Արտադպրոցական դաստիարակություն իրականացնող ազմակերպությունների ջենքային պայմանների բարելավում»	Կառույցների տեխնիկական կարողությունների և աշխատանքային միջավայրի բարելավում	Կառույցների տեխնիկական կարողությունների և աշխատանքաների կազմակերպում	Մարզադպրոցի բնականոն աշխատանքի և ուսումնամարզական գործընթացի բարելավելում	01.06.2022 թ.	10 476 100
Ընդամենը					**20 847 600**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011038180
Հ/Հ 900011038560
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

_____ Վ. Գասպարյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հրաձգության հանրապետական մարզադպրոց» ՊՈԱԿ

ք. Երևան, Բագրատունյաց 48
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018002940
ՀՎՀՀ 02205225

Տնօրեն՝

_____ Ա. Հայրապետյան
/ստորագրություն/ Կ.Տ